



**Հրազդանի Օրհուս կենտրոնի 2013թ.
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/փետրվար-նոյեմբեր/**

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին,

Հրագրանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Հրագրանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 56 միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Միջոցառում Քանակ

Անվանումը	Քանակը	Տոկոս
Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ	7	-
Հանրային լսումներ	1	-
Գործնական աշխատանքներ և արձագանքներ	14	-
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	19	-
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	10	-
Շնորհանդես	2	-
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	2	-
Փորձագիտական խորհրդի նիստեր	1	-
Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	565	-
ՀԿ ներկայացուցիչները		20%
պատանիներն ու երիտասարդներ		40%
ԶԼՄ ներկայացուցիչներ		20%
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ		7%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/		13%

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 147 մարդ:

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Ըստ ամիսների	Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը					
	Գրա- դարան	Տեսադարան	Տպիչ, պատճենահան	Բնտերնետ կապ	Տեղեկատվու թյան և խորհրդատվ ության տրամադրու մ	Մամլո ասուլիս
Հունվար- Փետրվար	1	0	3	3	2	0
Մարտ	1	0	3	3	3	0
Ապրիլ	4	2	8	5	2	0
Մայիս	2	7	7	1	3	1
Հունիս	2	0	9	9	2	0
Հուլիս	3	0	6	7	3	0
Օգոստոս	0	0	2	2	1	1
Սեպտեմբեր	6	1	6	7	4	0
Հոկտեմբեր	2	0	5	6	2	0
Նոյեմբեր						
ԸՆԴԱՄԵՆԸ	21	10	49	43	22	2

ԶԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/

Հրագրանի Օրհուս կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է տեղական և հանրապետական ԶԼՄ-ների հետ: Պատրաստվել են հաղորդաշարեր՝ ի թիվս Կենտրոն հեռուստաընկերությամբ թողարկվող «Էկոլոգիկա» հաղորդաշարի թողարկումներից մեկի, «Հրագրան» հեռուստաընկերությամբ ցուցադրվել է հաղորդում՝ նվիրված տարածաշրջանի բնապահպանական հիմնախնդիրներին: Կենտրոնում, նաև Օրհուս կենտրոնի և «Առողջ Հրագրան» խմբի նախաձեռնությամբ կազմակերպված ցանկացած միջոցառում լուսաբանվել է «Հրագրան» ՀՇ կողմից: Պատկան մարմիններին ուղղված գրությունները տարածվել էլեկտրոնային թերթերով: Սերտ համագործակցելով ԶԼՄ-ների հետ՝ Հրագրանի Օրհուս կենտրոնը խիստ կարևորում է լրատվամիջոցների դերը հասարակությանը ինֆորմացիան առավել մատչելի դարձնելու և բնապահպանական որոշակի գործընթացների ներգրավելու ուղղությամբ:

Փորձագետների խորհրդի նիստ /քանի անգամ, ինչ է քննարկվել, տարեկան պլաններ/

Հրագրանի Օրհուս կենտրոնը տարեկան աշխատանքային պլան կազմելուց հետո հրավիրում է փորձագետների խորհրդի նիստ, որտեղ քննարկվում են աշխատանքային պլանի հետ կապված բոլոր կետերը, դրանց իրականացման ուղիները, հնարավոր խոչընդոտները: Որոշակի կետերի փոփոխության, ավելացման, նվազեցման արդյունքում վերջնական պլանի հաստատումից հետո միայն կենտրոնը սկսում է իր տարեկան աշխատանքային գործունեությունը: Համապատասխանաբար Կենտրոնն այս տարի ունեցավ փորձագետների խորհրդի նիստ, որտեղ հաստատվեց տարեկան աշխատանքային պլանը:

2. *Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,*

2.1 *ՆՊԱՏԱԿ 1*

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

Կատարված գործողություններ

2.1.1 Կազմակերպելով Օրհուսի կոնվենցիայի լուսաբանմանն ուղղված մի շարք սեմինարներ, և հատկապես շեշտը դնելով հասարակայնության ծանուցման և մասնակցության կարևորության վրա՝ Հրազդանի Օրհուս բնապահպանական կենտրոնը կազմակերպել է մի շարք սեմինարներ երիտասարդ կամավորների համար, ում աջակցությամբ համայնքներում երիտասարդների համար կազմակերպվել են բնապահպանական որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության իրավունքի և կարևորության մասին: Նպատակը տարածաշրջանի բազմաթիվ բնապահպանական խնդիրներին, կազմակերպվող հասարակական լսումներին մասնակցության իրավունքի գիտակցումն է:

Ձեռք բերված արդյունքներ:

2.1.2 Բնապահպանական տեղեկատվության տրամադրման տարատեսակ միջոցներ կիրառելու շնորհիվ Հրազդանի Օրհուս բնապահպանական կենտրոնը, արդեն իսկ ակտիվ հասարակության կորիզ ձևավորելով և մի գաղափարի շուրջ համախմբելով նրանց, ստեղծել է “Առողջ Հրազդան խումբ” քաղաքացիական նախաձեռնությունը, ովքեր ստանձն են առել կենտրոնի աջակցությամբ զբաղվել տարածաշրջանի բնապահպանական խնդիրներով: Կազմակերպելով բազմաթիվ այցեր ԲՈՒՀ-եր, համայնքներ՝ խումբը նպատակ է հետապնդում հասարակությանը տեղյակ պահելով իրենց իրավունքների մասին՝ համալրել խմբի ակտիվ կազմը, նաև բերել նրանց այն հարթակ, որտեղ պետք է նրանց ձայնը լսելի լինի:

Իսկ համայնքներում սեմինարների անցկացման շնորհիվ խմբի կազմն ավելացել է ևս մի քանի ակտիվ երիտասարդներով:

2.2 ՆՊԱՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

Կատարված գործողություններ

2.2.1 Ցանկացած գործընթացին զուգահեռ / Հրազդանի երկաթահանքին առնչվող նոր փաստաթղթային գործողություններ, Մեղրաձորի ոսկու կորզման արտադրամաս և այլն/ “Առողջ Հրազդան” խմբի հետ կազմակերպվում են այցեր Մեղրաձոր, Հանքավան, Արտավազ համայնքներ, Հրազդանի տարբեր թաղամասեր՝ բնակիչների հետ հանդիպման՝ խնդիրների ներկայացման համար:

2.2.2 Կոտայքի մարզպետարանի, Հրազդանի քաղաքապետարանի աշխատակիցների, ՀԿ-ների և շահագրգիռ քաղաքացիների մասնակցությամբ կազմակերպվում են կլոր

սեղան- քննարկումներ: Քննարկումներն առավելապես կազմակերպվում են Կոտայքի մարզում հանքարդյունաբերության զարգացման թեմաներով:

2.2.3 Կենտրոնի նախաձեռնությամբ ցանկացած տեղեկատվություն լուսաբանվում է “Հրազդան” ՀՀ կողմից:

Ձեռք բերված արդյունքներ:

2.2.4 Մեղրաձորի ոսկու կորզման արտադրամասի ցիանային եղանակով շահագործման նախագծի վերաբերյալ հասարակական լսումներին ընդառաջ Մեղրաձորի համայնքապետը այցելել էր Հրազդանի Օրհուս կենտրոն՝ նախագծի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու վերաբերյալ:

2.2.5 Մեղրաձորցիները Օրհուս կենտրոնի կողմից կազմակերպած մասնագիտական քննարկումների արդյունքում բողոքի ակցիաների կազմակերպման և ՋԼՄ-ները լայնորեն օգտագործելու շնորհիվ տապալել են արտադրամասի ցիանային եղանակով շահագործման նախագիծը:

2.3 ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լսումներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Կատարված գործողություններ

2.3.1 Մասնակցելով հասարակական լսումներին Հրազդանի Օրհուս կենտրոնը “Առողջ Հրազդան խումբ” քաղաքացիական նախաձեռնության հետ միասին մշտապես հանդես է եկել իր առաջարկներով: Նաև առաջարկությունները ներկայացրել է գրավոր ձևով և տարածել լրատվամիջոցներով:

Ձեռք բերված արդյունքներ:

2.3.2 Ուլաշիկի գետավազանում գտնվող N5 ստորերկրյա հանքային ածխաթթվային ջրադրյուրի արդյունահանման նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հասարակական լսումների ժամանակ Կենտրոնի և “Առողջ Հրազդան” խմբի ներկայացրած առաջարկությունները հաշվի է առնվել և հանրությանը ներկայացվել նվազագույն բնապահպանական ռիսկերով նախագիծ:

2.4 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարաթորյակներ և այլն):

Կատարված գործողություններ,

2.4.1 Կազմակերպվել են կյոթ սեղան-քննարկումներ ՏԻՄ-երի և հասարակության միջև՝ քաղաքի կանաչապատման, աղբահանության, մաքրման կայանի բացակայության վերաբերյալ, և առավելապես ու հաճախակի կազմակերպվում են քննարկումներ հնարավոր հանքարդյունբերական խնդիրների շուրջ:

Ձեռք բերված արդյունքներ

2.4.2 Հանրության և կենտրոնի կողմից կազմվել է առաջարկությունների փաթեթ՝ քաղաքի էկոլոգիական խնդիրների հետ կապված, որը ներկայացվել է Հրագրանի քաղաքապետին ու ստացել դրական արձագանք: Ըստ այդմ, քաղաքապետարանը պատրաստվում է առաջարկությունները ներառել քառամյա զարգացման պլանի մեջ:

2.5 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

Կատարված գործողություններ,

2.5.1 Երիտասարդների համար կենտրոնում կազմակերպվել են սեմինարներ անտառների, բուսական և կենդանական աշխարհի, Հայաստանում առկա հանքարդյունաբերության վերաբերյալ

2.5.2 Կազմակերպվել են ուսուցողական բնույթ կրող ֆիլմի դիտումներ

2.5.3 Դպրոցներում անցկացվել են սեմինարներ օդի և ջրի աղտոտվածության, կենսաբազմազանության, դրանց վրա հանքարդյունաբերության հետևանքների, ՀՀ Ընդերքի մասին օրենքի և բնապահպանական որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության վերաբերյալ:

Ձեռք բերված արդյունքներ:

2.5.4 Դասընթացներից հետո որոշ դպրոցականներ այցելել են կենտրոն և ցուցաբերել պատրաստակամություն՝ իրենց մասնակցությամբ քաղաքի էկոլոգիական խնդիրներին ուղղված որոշակի նախաձեռնությամբ:

2.6 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացնում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

Կատարված գործողություններ,

2.6.1. Հրագրանի Օրհուս կենտրոնը կազմակերպում է ամենօրյա աշխատանքը և, նպատակային օգտագործելով կենտրոնի գույքը, ապահովում է կենտրոնի , գրադարանից,

տեսադարանից, ինտերնետից, տպիչից օգտվողների պահանջը: Տարեկան աշխատանքային պլանի նախագիծը կազմելուց անմիջապես հետո Կենտրոնը հրավիրում է փորձագիտական խորհրդի նիստ: Դիտողությունների, առաջարկությունների, փոփոխությունների հիմքում պլանը հաստատելուց հետո՝ կենտրոնը սկսում է իր տարեկան գործունեությունը: Ծրագրի ավարտին Հրազդանի Օրհուս կենտրոնը ներկայացնում տարեկան հաշվետվություն, որտեղ ամփոփվում է ողջ տարվա գործունեությունը, գործողություններն ու արդյունքները:

Ձեռք բերված արդյունքներ

2.6.2 Կազմակերպված և նպատակային աշխատանքի արդյունքում Հրազդանի Օրհուս կենտրոնն այսօր ունի ճանաչում և ձեռք է բերել վստահություն հասարակության կողմից:

3. Ծրագրի ֆինանսական հաշվետվություն: /կարող եք տեսնել կից ֆայլով/
4. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

Կոտայքի մարզպետարան

Հրազդանի քաղաքապետարան /ՏԻՄ/

Նախարարություններ

ՀԿ-ներ, “Առողջ Հրազդան խումբ” քաղաքացիական նախաձեռնություն

Քաղաքացիական հասարակություն

Տեղական և հանրապետական ՋԼՄ-ներ

Դպրոցներ, քոլեջներ, ինստիտուտներ

Կոտայքի հակակոռուպցիոն կենտրոն

5. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ

Արդեն իսկ երեք տարի ունենալով քաղաքացիական հասարակության ակտիվ զանգված՝ “Առողջ Հրազդան խումբ” քաղաքացիական նախաձեռնությունը՝ Կենտրոնը խմբի հետ միասին իրականացրել է որոշ նպատակային գործողություններ: Հենց տարեսկզբից գործողությունների պլանում առաջնահերթություն տալով ակտիվիստների շրջանակների ընդլայնմանը՝ իրականացվել են այցեր ԲՈՒՀ-եր, համայնքներ, կազմակերպվել են սեմինարներ, որի արդյունքում “Առողջ Հրազդան” խմբի գաղափարներին են անդամագրվել մի խումբ երիտասարդներ, ովքեր պատրաստակամորեն աջակցում են Կենտրոնի աշխատանքներին ու խմբի գործողություններին:

Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

Ծրագրի ընթացքում ի հայտ եկած դժվարություններն առավելապես կապված են ֆինանսական սղության հետ՝ միջոցառումների պատշաճ կազմակերպում, տեխնիկական որոշակի հարցեր, կենտրոնում ամենօրյա աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու համար ոչ հարմարավետ պայմաններ / ջեռուցման խնդիր/:

6. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Բարձր գնահատելով ծրագիրը, դրա ընթացքն ու արդյունքները՝ անհրաժեշտ է ապահովել ծրագրի շարունակականություն՝ տեղեկացված ու ակտիվ հասարակություն ունենալու և բնապահապանական ոլորտում առավելագույն արդյունքների հասնելու համար:

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:
/կարող եք տեսնել կից ֆայլով, այսինքն այստեղ կցելու եք Ձեր Statistics Excel-ի ֆայլը//

8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):

Հրագրանի Օրհուս Կենտրոնի համակարգողներ Անահիտ Մնացականյան

Ժորա Առաքելյան

E:mail- manahit84@mail.ru

zhora.arakelyan@mail.ru

Հեռ (093) 84-30-08

(091) 66-33-16